ռութիւնները, քաղաքն ու նաւահանգիստը։ Վրաց զօրքերի մի մասը փախել էր խուճապահար, մի ահագին բազմութիւն էլ մնացել էր գերի։

Ցայտնի դարձաւ նոյնպէս, որ Թիւրքերին միացել է ամբողջ Աջարիայի և Ախալցխայի մահմեդականութիւնը, որ Աբաս-Թումանն էլ գրաւած է Թշնամու կողմից։

Այս ամենը չէր նպաստում վրացիների մարտական ոգու յարատևութեան։ Մի անգամ միայն նրանք ունեցան զինուորական յաջողութիւն՝ Զոլոքի մօտ։ Բայց այդ փոքրիկ ճակատամարտը պատահական միջադէպ էր։ Իրապէս վրացիները նահանջում էին անընդհատ. նրանց մէջ արագ զարգանում էր դասալքութիւնը, քայքայումն ու բարոյալքումը։ Պարզ էր, որ վրացի ժողովուրդը չէր ուզում կռուել, թէև Թիւրքերն արդէն մտել էին բուն Վրաստանի ներսերը՝ Գուրիան և գրաւել Օղուրգետին։ Վրացի զորձիչները շատ շուտով հասկացան, որ ժողովուրդը չի հետևում իրենց և շտապեցին փաստից հանել տրամաբանական եզրակացութիւնները։

Դրան նպաստեց և ապր. 3-ին Տրապիզոնից վերադարձած պատուիրակութիւնը, մասնաւորապէս Զխենկելին, որը ոգի ի բուն աշխատում էր համոզել իր ընկերներին, որ միակ փրկութիւնը Բրեստ-Լիտովսկի դաշնագիրն ընդունելու, Անդրկովկասը անկախ յայտարարելու և հաշտութեան բանակցութիւնները վերսկսելու մէջ է։ Եւ քանի ճակատի պարտութիւններն աւելանում էին, այնքան մեծանում էր Զխենկելիի կողմնակիցների թիւը։

Վրաց անյաջողութիւնները սուր ցաւ էին պատճառում հայերին, որոնք սարսափով էին դիտում Թիւրքերի յառաջխաղացումը։ Նրանց ուշադրութիւնը ամբողջապէս բեւեռուած էր Կարսի շրջանում. Թշնամին ինքնավստահ քայլերով մօտենում էր Կովկասի անպարտելի ամրութեան։ Կարսի անկումը մահ էր հայ ժողովրդի համար, որը, փակուած ծուղակի մէջ, չունէր փրկութեան ո՛չ մի ճանապարհ։

Էրզրումի աղէտը անասելի խուճապ առաջ բերեց հայ ժողովրդի մէջ։ Ծայր տուեց դասալքութիւնը, որին ի պատասխան զինուորական մարմինները Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում և ուրիշ վայրերում կատարեցին մի շարք ահաբեկումներ, որոնք ցնցող տպաւորութիւն արին հասարակութեան վրա։ Ազգ. Խորհուրդն էլ, ճառերից ու կոչերից յոգնած, վերջապէս շարժուեց տեղից, և նախագահ Ա. Ահարոնեանը, անդամներ՝ Ս. Մամիկոնեանը, Տ. Բէգզադեանը, Ն. Աղբալեանը, ինչպէս նաև Թիֆլիսի զինուորական մարմինը, անցան ռազմաճակատ։ Ազգ. Խորհրդի անդամները այցելեցին Ալեքսանդրապոլ, Կարս, Սարըղամիշ, ամէն տեղ շփում ունեցան զօրքի ու ժողովրդի հետ և իրենց ներկայութեամբ սիրտ տուին ամենքին։ Խորհրդակցութիւններ ունեցան բանակի բարձր հրամանատարութեան և հասարակական ներկայացուցիչների հետ։

Ազգ. Խորհրդի անդամները Սարըղամիշում էին դեռ, երբ սկսուեց Թիւրքական յարձակումը Կարաուրգանից։ Սարըղամիշի անկումից և Թիւրքական վերջնագիրը ստացուելուց յետոյ, Հ. Յ. Դաշնակցութեան Արևելեան